<<Կրթություն առանց սահմանի>> հասարակական կազմակերպություն

Վերապատրաստվող ուսուցչի հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման՝ Օտար լեզվի դասավանդման մեթոդներ

Հետազոտող ուսուցիչ՝ Մարգարիտ Մելքոնյան հ.78 դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն	2-3
Նոր մոտեցումներ օտար լեզվի դասավանդման պրոցեսում	4-6
Դասարանի կառավարման ռազմավարություններ	6-10
Արդյունավետ դասավանդման վերաբերյալ այլ տեսակներ	10-13
Եզրակացություններ	14
Օգտագործված գրականության ցանկ	15-16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մնացած բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին:

Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր աշակերտի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք:

Նոր մոտեցումները օտար լեզվի դասավանդման պրոցեսում, ինչպիսիք են ակտիվ ուսուցումը, ինտերակտիվ մեթոդները, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովում են անհատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, մակարդակից, հակումներից: Առաջնային նշանակությունը տրվում է նյութն ընկալելուն, բովանդակության փոխանցմանը և իմաստի արտահայտմանը, որն էլ տանում է լեզվի քերականական կառույցների և բառերի անուղղակի ուսուցմանը:

Մեծ տեղ է հատկացվում ակտիվ հաղորդակցական կարողությունների զարգացմանն ու կիրառմանը: Այն իրականացվում է մենախոսությամբ, երկխոսությամբ, հարցազրույցի, դերախաղի, մտքերի փոխանակմամբ, շարադրանքի ներկայացմամբ, տեղեկատվության փոխանցմամբ, համագործակցային առաջադրանքներով և քննարկումներով: Այս բոլորը իրականացվում է անհատական, զրույցներով, խմբերով: Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող աշակերտները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն: Օտար լեզվի ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետող և կիրառող:

«Ո՞րն է ուսուցման ամենից արդյունավետ մեթոդը» հարցի լավագույն պատասխանն այն է, որ դա կախված է նպատակից, աշակերտից, ուսուցանվող նյութի բովանդակությունից և ուսուցչից: Հաջորդ լավագույն պատասխանն է՝ «երբ աշակերտներն իրենք ուսուցանում են այլ աշակերտների»:

Ուլբերթ Ջ. Մըքքիչի

Նոր մոտեցումներ օտար լեզվի դասավանդման պրոցեսում

Ամենից հաճախ, ավանդական դասարաններում աշակերտները սոսկ **պասիվ կերպով** են ներգրավված ուսումնառության գործում, այսինքն՝ լսում են դասավանդողին, դիտում երբեմն-երբեմն ցուցադրվող սլայդը, կամ (պահանջված դեպքում) ընթերցում դասագիրքը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նման պասիվ ներգրավվածությունը սովորաբար հանգեցնում է աշակերտների կողմից գիտելիքների սահմանափակ մտապահման:

Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ վերափոխելով նյութի մատուցման ձևերը, դասավանդողները կարող են ստեղծել մի միջավայր, որում գիտելիքների մտապահումը զգալիորեն կաճի: Անշուշտ, նման իրադրությունները պահանջում են նաև աշակերտների մասնակցությունը: Լավագույն գործընթացներից մեկը այսպես կոչված *ակտիվ ուսումնառության* իրագործումն է:

Ուրեմն, ի՞նչ բան է *ակտիվ ուսումնառությունը*: Պարզ ասած, դա աշակերտներին ուղղակիորեն և անուղղակիորեն ներգրավելն է բուն ուսումնառության գործընթացում: Սա նշանակում է, որ սոսկ խոսքով կամ տեսողական տեղեկատվություն ստանալու փոխարեն աշակերտները դառնում են ***և*** մասնակից ***և*** կատարող: Վերջին խմբավորումը հենց այն է, ինչ նկատի ունեն *ակտիվ ուսումնառություն* ասելով: Այսպիսով, պարզ բառերով արտահայտած, *ակտիվ ուսումնառությունը* աշակերտներին որևէ գործում ներգրավելն է՝ բացի դասախոսություն լսելուց և նշումներ կատարելուց, որոնք հետո օգնում են նրանց յուրացնել և կիրառել դասընթացի նյութը: Աշակերտներին կարելի է զբաղեցնել այնպես, որ նրանք միմյանց հետ զրուցեն և միմյանց լսեն, կամ՝ գրեն, ընթերցեն և խորհրդածեն ինքնուրույն:

Ակտիվ ուսումնառությունը մի գործընթաց է, որն իրենից ներկայացնում է

ակտիվ ուսումնառության աշխատանքների ենթահավաքածու, որոնք աշակերտներին դրդում են դասընթացի նյութի ընկալման ընթացքում միմյանց

հետ համագործակցելու: Սովորաբար դա կատարվում է հետևյալ կերպ. դասարանը բաժանվում է խմբերի (2-3 հոգանոց) և տրվում մի հարց, հաճախ կոնցեպտուալ բնույթի, և յուրաքանչյուր խմբի թույլ է տրվում մեկ-երկու րոպե քննարկել հնարավոր մի պատասխան: Այնուհետև պատահականորեն հարցվում է պատասխանը:

Կարևոր է հասկանալ, որ մի խմբում նստած և միասին սովորող աշակերտները, կամ այն խմբային նախագծերը (projects), որոնցում մեկ-երկու աշակերտ կատարում են ողջ աշխատանքը, չեն ներկայացնում ակտիվ կամ գործակցային ուսումնառություն:

Ինչպես ուսուցիչները, այնպես էլ աշակերտները կցանկանան իմանալ, թե ... *«Որոնք են ակտիվ ուսումնառության օգուտները»:* Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ ի լրումն **տեղեկատվության մտապահման** ակնհայտ առավելությունների, այս կամ այն չափով կկատարելագործվեն՝

- աշակերտ-ուսուցիչ համագործակցութունը
- աշակերտ-աշակերտ համագործակցությունը
- ակադեմիական առաջադիմությունը (գնահատականները)
- հաղորդակցման հմտությունները
- բարձր մակարդակի մտածողության հմտությունները
- թիմային աշխատանքը
- վերաբերմունքն առարկայի հանդեպ և սովորելու շահագրգռվածությունը:

Առավելությունն այն է, որ՝

- առանձին աշակերտներ կարող են խորանալ մի խնդրի մեջ և հանձնվել, մինչդեռ աշակերտների խմբերը հակված են կանգ չառնել և առաջ շարժվել՝ փնտրելով լուծման ուղիներ:
- աշակերտներն առիթ են ստանում շփվելու հիմնախնդիրների լուծման այլընտրանքային ռազմավարությունների հետ
- աշակերտները հնարավորություն են ստանում միմյանց հարցեր տալ և դրանց պատասխանել

- և, ինչպես ասում է Մըքքիչին (տես վերի մեջբերումը), աշակերտները լավագույնս սովորում են, երբ *իրենք* են ուսուց անում:

Դասարանի կառավարման ռազմավարություններ

Դասարանի հաջող կառավարումը ներառում է ոչ միայն արդյունավետ արձագանք՝ հիմնախնդիրներ ծագելիս, այլև հիմնախնդիրների հաճախակի ծագման կանխումը: Դասարանի կառավարման վերաբերյալ ամենից արդյունավետ որոշումները հիմնված են այն նպատակների և արդյունքների մասին հստակ գաղափարի վրա, որոնց ցանկանում է հասնել ուսուցիչը:

Կազմակերպումը

Դասավանդման ռազմավարությունների հետ մեկտեղ պետք է մշակել կանոններ և ընթացակարգեր, որոնք աշակերտներին կօգնեն բավարարել իրենց անհատական և ակադեմիական կարիքները:

- Աշակերտներին նստեցրեք Ս-աձև, շարքերով կամ շրջանով, որպեսզի տեսնեք և հեշտությամբ մոտենաք նրանց:
- Ամեն առավոտ փակցրեք օրվա ժամանակացույցը և քննարկեք փոփոխությունները:
- Զբաղեցրեք աշակերտներին, նախքան առաջադրանքի վերաբերյալ հստակ ցուցումներ տալը:
- Աշակերտներին խրախուսեք պատասխանատվություն ստանձնել իրենց ուսումնառության համար՝ որոշելով ինքներդ չկատարել այն, ինչ աշակերտներն իրենք կարող են կատարել:
- Սահմանեք կարգ տնային աշխատանքների հավաքման, թղթերի բաժանման և այլնի համար:
- Շրջեք սենյակում և օգնեք բավարարել անհատական կարիքները:
- Տվեք պարզ, քայլ առ քայլ գործողություններ պահանջող ցուցումներ:
- Աշակերտներին հիշեցրեք դասին առնչվող հիմնական ընթացակարգերը:

- Օգտագործեք մրցակցություն խմբերի միջև՝ խթանելու առավել կարգուկանոնով կատարվող անցումներ (orderly transitions):
- Մշակեք անցումային աշխատանքներ: Կատարեք կառուցողական աշխատանքներ (structured activities), որոնք աշակերտներին կօգնեն անցում կատարել ակտիվ ժամանակահատվածներից դեպի առավել հանդարտ յուրացման աշխատանքներ:

Հաղորդակցություն

Արդյունավետ հաղորդակցությունը դասարանի հաջող կառավարման հիմքն է: Հաղորդակցման հմտությունները կարելի է բաժանել երկու կատեգորիայի՝ **հաղորդում և ընկալում:**

Խոսքի հաղորդման հմտությունները

- խոսելիս գործ ունեցեք ներկայի հետ: Տեղեկատվությունը առավել օգտակար է, երբ հնարավորինս շուտ է փոխանակվում :
- Խոսեք ուղղակիորեն աշակերտների հետ և ոչ թե նրանց մասին: Այդ դեպքում ուսուցիչները հարգանք են ցուցաբերում աշակերտների նկատմամբ, և վերջիններս ստույգ տեղեկատվություն են ստանում մեծահասակների կարծիքների մասին:
- Խոսեք քաղաքավարությամբ: Դա աշակերտներին դրական օրինակ է տալիս:
- Ձեր ասածների համար պատասխանատվություն ստանձնեք «ես» անձնական դերանվան գործածությամբ: Օրինակ, «Երբ ինձ ընդհատում են, ես շեղվում եմ և դժվարանում օգնել մյուս աշակերտներին»:
- Նախընտրելի է խոսել հաստատական եղանակով, քան՝ տալ հարցեր: Աշակերտների վարքի հետ գործ ունենալիս հարցերը հաճախ աշակերտներին մղում են պաշտպանական դիրք գրավելու:

Լսելու հմտություններ (առավել արդյունավետ ունկնդիր դառնալու հնարքներ):

- Լսեք զգացմունքային (empathic listening) և ոչ թե գնահատողական դիրք ընդունելով: Դա խոսողին զգալ է տալիս, որ իրեն պարզորոշ լսել են, և արտահայտված կարծիքներն ընդունելի են:

- Լսեք այնպես,որ խոսակիցը զգա ձեր ուշադրությունը. դա թույլ է տալիս ներգրավվել երկխոսության մեջ:
- Նայեք խոսողի աչքերին և կարդացեք նրա մտքերը կամ ոչ խոսքային արտահայտությունները՝ «շարժումների լեզուն»:
- Ընդգծեք ուժեղ առաջնորդի ձեր դիրքը՝ կեցվածքով, դեմքի արտահայտություններով և շարժումներով:

Դիտարկում (Monitoring)

Դասի ընթացքում աշակերտների բացասական վարքագիծն ի հայտ է գալիս, երբ նրանց թվում է, թե «իրենց ցույց տալն» ավելի հետաքրքիր է, քան՝ ձանձրալի դասը, կամ ավելի լավ, քան դասն այլ կերպ ձախողելը: Աշակերտները կարող են վատ վարք դրսևորել նաև այն ժամանակ, երբ ներգրավված չեն ուսումնառության աշխատանքներում, չեն ընբռնում առաջադրանքը, կամ չեն կարող օգնություն ստանալ, երբ դրա կարիքն ունեն: Ստորև տրվում են դասարանում փոքր անկարգություններին արձագանքելու օգտակար հնարքներ.

- Դասարանը հաճախ աչքի անցկացրեք՝ հնարավոր խնդիրները նկատելու և դրանց արձագանքելու համար:
- Ձեր պատասխան գործողությունը աշակերտի անկարգ վարքին պետք է լինի հանդարտ և արագ՝ ստեղծելու դրական զգացողությունների մթնոլորտ:
- Աշակերտների հետ սկզբում հաստատեք դրական շփում՝ գովելով նրանց դրական վարքագիծը, որը մրցակցում է բացասական վարքի հետ:
- Աշակերտներին հիշեցրեք դասարանային այն կանոնը կամ ընթացակարգը, որը նրանք չեն ցուցադրում:
- Աշակերտներին հստակորեն իրազեկեք կանոնների ու ընթացակարգերի և դրանց խախտման հետևանքների մասին:
- Աշակերտներին պարզորոշ կերպով ակնարկեք, որ անկարգ վարքը շարունակելու դեպքում սպասվում են նախանշված հետևանքները:
- Հետևողականորեն գործադրեք վատ վարքի համար նախանշված միջոցները:
- Աշակերտներին տեղեկացրեք, որ իրենք են պատասխնատու իրենց վարքի հետևանքների համար:

- Դիմեք միջոցների, որոնք բնույթով դաստիարակչական են:
- Երբ մեկ կամ երկու աշակերտ իրենց անկարգ են պահում, դասարանի մյուս աշակերտների ուշադրությունը պահեք իրենց հանձնարարության վրա: Հետո ժամանակ գտեք ցածրաձայն խոսելու անկարգություն անողների հետ:

Դասավանդման իրականացումը

Վերջին տարիներին առաջատար մանկավարժները այն կարծիքն են հայտնում, որ աշակերտների վարքի և ուսումնական ձեռքբերումների վրա ազդող վճռորոշ գործոն է դասավանդման որակը: Արձագանքն աշակերտների անկարգությանը արդյունավետ է լինում, երբ այն առնչվում է աշակերտի արժանապատվությանն ու ինքնագնահատանքին և խրախուսում նրան պատասխանատվություն կրել իր վարքի համար:

- Աշակերտներին մասնակից դարձրեք իրենց աշխատանքի և ձեր դասավանդման գնահատմանը:
- Բաժանեք որևէ պլան, սահմանումներ կամ որևէ ուսումնական ուղեցույց, որոնք կօգնեն աշակերտներին կազմակերպելու իրենց մտքերը և կենտրոնացնելու ուշադրությունը:
- Տվեք հարցը և աշակերտին տրամադրեք բավականաչափ ժամանակ՝ նախքան նրան հարցնելը:
- Փոփոխեք դասավանդման ոճը, ինչպես նաև բովանդակությունը՝ բավարարելու աշակերտների կողմից յուրացման բազմազան ոճերը:
- Հանձնարարեք համապատասխան դժվարության աշխատանք՝ ըստ ունակությունների տարբեր մակարդակների:
- Հնարավորության դեպքում նյութերը կապեք աշակերտների կյանքին:
- Եղեք աշխույժ, ստեղծեք սպասողական մթնոլորտ, հանձնարարեք աշակերտների հետաքրքրությունը գրավող աշխատանքներ, շահագրգռեք աշակերտներին մասնակցելու դասին:
- Աշակերտների կողմից նյութի յուրացումն ապահովեք համագործակցային խմբային աշխատանքի, մրցող թիմերի, խմբային քննարկումների, բանավեճերի և դերակատարումների միջոցով:

Արդյունավետ դասավանդման վերաբերյալ այլ տեսակետներ

Վերջին տարիներին հետազոտողների ուշադրությունը կենտրոնացվել է ավելի շուտ դասավանդման համատեքստի և գործընթացի, քան մեկուսացված, տարանջատ վարքագծերի վրա: Նոր հետազոտությունը քննում է դասավանդման համատեքստը, աշակերտների կողմից գիտելիքների յուրացման և ուսուցչի կողմից նյութի մատուցման բնույթը, ինչպես նաև տվյալների հավաքման ընթացակարգերը:

Գործընթաց-արդյունքի հետազոտություններում առանձնացված բնութագրերը տրամադրում են կոնկրետ տվյալներ այն մասին, թե ինչ են անում հաջողված ուսուցիչները, և ստեղծում «առողջ հիմք ներկայումս կատարվող ուսումնասիրությունների համար» (Բրանդտ): Սակայն արդյունավետ դասավանդման վերաբերյալ նոր տեսակետները ուշադրության կենտրոնում ունեն՝

ա) ուսուցման և յուրացման շարժը (դինամիկան) դասարանի ընդհանուր համատեքստում,

բ) աշակերտների կողմից յուրացման բնույթը,

գ) նյութի ուսուցման բնույթը,

դ) դասարանում տվյալների հավաքման նոր ընթացակարգեր:

Գոյություն ունեն բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք փոխհարաբերակցում են ուսուցումը և յուրացումը դպրոցին և ուսուցչի աշխատանքի արդյունավետությանը: Ուսուցման և յուրացման որակի վրա կենտրոնացումը մեծապես բարձրացնում է աշակերտների առաջադիմությունը և անհատական վարքը:

- *Համատեքստ:* Արդյունավետ դասավանդման վերաբերյալ մի նոր մոտեցում կենտրոնանում է դասարանի համատեքստի վրա, և աշակերտների առաջադիմությունը դառնում է ողջ դպրոցում ուսուցման և յուրացման բարելավման ընդհանուր ջանքի մասը: Սեմոնզի և իր գործընկերների կարծիքով, «Հետազոտական գրականությունից պարզ է, որ արդյունավետ ուսումնառության հիմքը որակյալ ուսուցումն է»: Գործընթաց-արդյունքի հետազոտությունը մի փորձ էր՝ առանձնացնել կետերը (արդյունավետ ուսուցման կողմերը), մինչդեռ նոր

հայացքը փորձ է անում կապել կետերը՝ ուսուցման տարանջատ վարքագծերից բացի քննելով բազմազան ոլորտներ: Այն ոլորտները, որոնք համարվում են դպրոցի համատեքստի մաս, ներազդում են դասավանդման և յուրացման վրա, ներառում են ուղեղային հետազոտություններ, յուրացման նոր սահմանումներ և ուսուցիչների դերը որպես առաջնորդներ:

- *Աշակերտների յուրացումը:* Արդյունավետ դասավանդման մեկ այլ նոր հայացք ձգտում է ընդարձակել յուրացման մեր բնորոշումը՝ հաշվի առնելով այն փաստը, որ աշակերտները «սովորում և մտապահում են միայն այն դեպքում, երբ գիտելիքները նրանց համար ունեն կիրառելիություն և իմաստ» (Շմոքեր): Աշակերտներն այնուհետև այս նոր տեղեկատվությունը միացնում են գիտելիքների իրենց բազային՝ կառուցելով իրենց սեփական իմաստը և ըմբռնումը: Այս գործընթացում նրանց յուրացումը «մնում է «տեղաշարժված» դեպի գլխուղեղ», ուր գտնվում են լեզվի, խորհրդանշանների և պատկերների կենտրոնները (Գրիշեմ): Լեյնհարդտը այնուհետև առաջարկում է, որ յուրացման հետազոտությունը ընդլայնում է արդյունավետ դասավանդման մեր ըմբռնումը, երբ մենք ճանաչում ենք՝ (ա) որ գոյություն ունեն գիտելիքների բազմակի ձևեր (Արմսթրոնգ, Գարդներ). (բ) որ աշակերտները նոր գիտելիքներ կառուցելիս հիմնվում են նախկին գիտելիքների վրա (Բրուքս և Բրուքս). (գ) որ յուրացումը ներառում է սոցիալական փոխշփումներ (Փայըջեթ, Վիգոտսկի):
- *Նյութը:* Նյութի ուսուցման հետազոտողները կարևորում են այն, որ անհրաժեշտ է, որպեսզի աշակերտները տեսնեն ուսումնական ծրագրի տարբեր առարկաների առավել միասնական պատկերը: Անցյալում մեկուսացված հատվածներով յուրացումը ուսուցման նպատակն էր: Աշակերտները հաճախ ի վիճակի չէին լինում կապակցել մեկուսացված մասերը կամ հատվածները և սովորելու շահագրգռվածություն չունեին: Բրոֆիի կարծիքով, ներկայիս հետազոտությունները կենտրոնանում են փորձերի վրա՝ ուսուցանել թե՛ հարակից բովանդակության առանձին տարրեր, թե՛ դրանց միջև առկա կապերը, այն աստիճան, որ աշակերտները կարողանան բացատրել տեղեկատվությունը իրենց բառերով և կարողանան դա համապատասխանորեն օգտագործել դպրոցում և դպրոցից դուրս:

  Նյութի ուսուցումը ներառում է ոչ միայն հասկացությունների բացատրություն, այլև գիտելիքների և հմտությունների կապի մոդելավորում՝ օգտագործելով

«բարձրաձայն մտածելու» հնարքներ՝ «ընտրելով որևէ թեմա և դասերը կառուցելով դրանց շուրջ» (Սադովսկի): Շմոքերը պաշտպանում է Սթիվ Հեսին, որն առաջարկում է, թե «բովանդակության ոլորտների ներսում կիրառության շեշտադրումը առարկաների ներսում և առարկաների միջև բնական միասնացման լավագույն հիմքն է:

Ըստ Բրոֆի նյութի արդյունավետ ուսուցումը ներառում է հինգ քայլ.

1) առանձնացնել ուսուցման նպատակները, որոնք ընդգծում են աշակերտների ունակությունը՝ բովանդակությունը կիրառել իրական միջավայրում,

2) ընտրել բովանդակություն և հասկացություններ, որոնք կազմակերպվում են սկզբունքների, հզոր գաղափարների կամ թեմաների մի հավաքածուի շուրջ,

3) փոխել ուսուցչի դերը՝ տեղեկատվությունը գորընթացի վաղ փուլում ներկայացնողից՝ սխեմատիկ պլան կառուցողի և աշակերտների հարցերին պատասխանողի,

4) ներառել աշխատանքներ և առաջադրանքներ, որոնք պահանջում են քննադատական մտածողության և հիմնախնդիրների լուծման հմտություններ,

5) ստեղծել դասարան, որը դառնում է սովորող համայնք, ուր երկխոսությունը և փոխշփումները խթանում են ըմբռնումը:

Տվյալների հավաքում: Տվյալների հավաքման նոր ընթացակարգերը ուսուցման հետազոտություններում կենտրոնանում են որոշակի ուսումնական բաժինների վրա, հաշվի առնում ուսուցիչների ուսուցողական նպատակները և ապա գնահատում աշակերտների յուրացումը՝ այս պլանների և նպատակների հիման վրա: Ի տարբերություն գործընթաց-արդյունքի հետազոտությունների, որոնք կատարում էին դասարանի բազմաթիվ լուսանկարումներ՝ ուսուցման առանձին բնութագրիչների նկատառումով, ուսուցման վերաբերյալ նոր հայացքները քննության են առնում ուսուցման-յուրացման գործընթացի ընթացիկ կողմերը՝ օգտագործելով դեպքի ուսումնասիրության ձևը ուսումնական ամբողջ բաժնում: Այս նոր հետազոտությունը ձգտում է ստեղծել հասկացությունների և թեմաների, ինչպես նաև կիրառվող որոշակի հմտությունների ուսուցման պատմությունների մի շտեմարան բոլոր ուսուցիչների համար: Պատմությունների միջոցով ուսուցիչներն սկսում են տեսնել իրենց աշակերտների ուժեղ կողմերը, ավելի լավ վերահսկել սեփական մասնագիտական զարգացումը և կազմել դասավանդման պլաններ կամ պլաններ դասավանդման մեջ փոփոխություններ մտցնելու համար (Գոմես): Դեպքի

ուսումնասիրության իմացությամբ է, որ կայանում է բովանդակության և մանկավարժական մեթոդների փոխներգործություն: «Բովանդակությունն ընդդեմ դասավանդման մեթոդների» դարավոր վիճաբանությունը դառնում է կասկածելի հարց, քանի որ այդ պատմությունները, վերապատմվելով ուսուցիչների կողմից, տրամադրում են դասավանդման գործելակերպերի իմաստության առավել համակողմանի պատկեր. «Պատմությունները որսում են փորձառություններ... և տրամադրում ուսուցման վերաբերյալ ցանկացած որոշման կամ գործողության բազմաչափումնային կողմերն արտահայտելու և ներկայացնելու ձև» (Փինիգար):

Ինչպես նկատել են Փորթերը և Բրոֆին, «Արդյունավետ աշխատող ուսուցիչներն ուշադիր են իրենց աշխատանքի նկատմամբ. նրանք ժամանակ են տրամադրում **խորհրդածություններ**ին և **ինքնագնահատմանը»:** Դեպքերի ուսումնասիրությունների մասին խորհելիս ուսուցիչները գտնում են ուսուցման-յուրացման իրադրություններ, որոնք իմաստալից են պլանավորման և դասավանդման համար: Ինչպես նշում է Շուլմանը (Բրանդտի մեջբերմամբ), «Մեր մեծամասնության համար՝ որպես ուսուցիչների, ուսուցման բաժինը դասը չէ. դասը պարզապես ավելի խոշոր միավորի մի մասն է: Որքան ավելի լավն ենք մենք դառնում որպես ուսուցիչներ, այնքան ավելի շատ ենք մտածում այն մասին, թե մեր դասերն ինչպես են կապակցվում» (էջ 16): Նոր հետազոտությունները քննության են առնում դասարանի բարդությունը և խորհրդածությունները դասավանդման գործելակերպերի իմաստության վերաբերյալ՝ դասարանի համատեքստում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն հոդվածում ամփոփվել է օտար լեզվի հիմնական նպատակը և ուսուցչի խնդիրը, որում անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր, որ յուրաքնչյուր աշակերտին հնարավորություն կտա ցուցաբերել նկտիվիություն և ստեղծագործական միտք։

Ներկայացվել է նաև ակտիվ ուսումնառությունը և նրա առավելությունները։

Վերջին տարիներին հետազոտողները կենտրոնացել են ավելի շուտ դասավանդման համատեքստի և գործընթացի, քան մեկուսացված, տարանջատ բնութագրերի վրա: Նոր հետազոտությունը քննում է դասարանի համատեքստը, աշակերտների յուրացման և ուսուցչի կողմից նյութի մատուցման բնույթը, ինչպես նաև տվյալների հավաքման ընթացակարգերը:

Ուսուցիչները դասավանդման իրենց ունակության նկատմամբ վստահություն ձեռք բերելուն համընթաց դասավանդումը դարձնում են ավելի արդյունավետ:

Օտար լեզվի ուսումնասիրությունը անհրաժեշտ և առաջնային միջոց է միջազգային կրթության համար, որի հիմնական նպատակն է ընդլայնել սովորողի հաղորդակցվելու տ համագործակցելու կարողությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Capie, W., Tobin, K. G., & Boswell, M. (1980). Using student achievement to validate ratings of student teacher competencies. Paper presented at the annual meeting of the American Educational Research Association, Boston.

Coker, H., Lorentz, C. W., & Coker, J. (1980). Teacher behavior and student outcomes in Georgia study. Paper presented at the annual meeting of the American Educational Research Association, Boston.

Creemer, B. P. M. (1994). The history, value and purpose of school effectiveness studies. In *Advances in school effectiveness research and practice.* D. Reynolds et al. (eds.). Oxford: Pergamon. Cunningham, W. G., & Gresso, D. W. (1993). *Cultural leadership: The culture of excellence in education.* Boston: Allyn & Bacon.

Danielson, C. (1996). *Enhancing professional practice: A framework for teaching.* Alexandria, VA: Association for Supervision and Curriculum Development.

Davis, R. H., Alexander, L. T., & Yelon, S. L. (1974). *Learning system design: An approach to the improvement of instruction.* New York: McGraw-Hill.

Dawe, H. A. (1984). Teaching: A performing art. *Phi Delta Kappan,* 65,548-552.

Doyle, W. (1985). Classroom organization and management. In *Handbook of research on teaching.* (3rd ed.). M. C. Wittrock (ed.). American Educational Research Association. New York: Macmillan.

Eby, J. W, & Kujawa, E. (1994). *Reflecting, planning, and evaluation.* Columbus, OH: Merrill Publishers. Eggen, P, & Kauchak, D. (1994). *Educational psychology: Classroom connections.* (2nd ed.). Columbus, OH: Merrill Publishers.

Eisner, E. (1983). The art and craft of teaching. *Educational Leadership,* 40, 4-14.

Eisner, E. W. (1994). *The educational imagination: On the design and evaluation of school programs.* (3rd ed.). New York: Macmillan.

Ellett, C. D., Capie, W., & Johnson, C. E. (1981). *Further studies of the criterion-related validity of the teacher performance assessment instruments.* Athens, GA: Teacher Performance Assessment Project.

Emmer, E. T. (1982). *Management strategies in elementary school classrooms.* Report no. 6052. Austin: Research and Development Center for Teacher Education, University of Texas at Austin. Emmer, E. T., Evertson, C. M., & Anderson, L. M. (1980). Effective classroom management at the beginning of the school year. *Elementary School journal,* 80, 219-231.

Evertson, C. M., & Emmer, E. T. (1982). Effective management at the beginning of the school year in junior high classes. *Journal of Educational Psychology,* 74, 485-498.

Evertson, C. M., Emmer, E., & Brophy, J. E. (1980). Predictors of effective teaching in junior high mathematics class. Journal *of Research in Mathematics Education,* 11, 167-178.

Fisher, C., Marliave, R., & Filby, N. (1979). Improving instruction by increasing academic learning time. *Educational Leadership,* 37, 52-54.

Fisher, C. W., Berliner, D. C., Filby, N., Marliave, R., Cahen, L. S., & Dishaw, M. M. (1981 Winter). Teaching behaviors, academic learning time, and student achievement: An overview. *Journal of Classroom Interaction,* 17, 2-15.

Gage, N. L. (1985). *Hard gains in the soft sciences: The case of pedagogy.* Bloomington, IN: Phi Delta Kappa.

Gage, N. L., & Berliner, D. (1984). *Educational psychology.* (3rd ed.). Boston: Houghton Mifflin. Gage, N. L., & Giaconia, R. (1981). Teaching practices and student achievement: Causal connections. *New York University Education Quarterly,* 12, 2-9.